



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՏԱՆ ԲԱՑՈՒՄՆ ՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպես ծանօթ է, Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, իւրաքանչիւր ամսուան առաջին Շաբաթ երեկոյեան տեղի կ'ունենայ Ս. Պատարագ կամ եկեղեցական արարողութիւն, ի հոգեւոր սպասարկութիւն մեր նոր սերունդին ու հաւատացեալ ժողովուրդին:

Շաբաթ, 6 Փետրուարի երեկոյեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ազգ. Առաջնորդարանի մատրան մէջ: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Ս. Պատարագին երգեցողութիւնը կատարեցին Ազգային Առաջնորդարանի «Լուսաւորիչ» Երիտասարդաց երգչախումբի անդամներ: Ներկայ էին Խորհրդատան բարերարները՝ Տէր եւ Տիկին Յովսէփ եւ Էլօ Պոյաճեան եւ ընտանիքի անդամները, ինչպէս նաեւ Առաջնորդ Սրբազան Հօր Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան ընթրիքի գլխաւոր հովանաւորները՝ Չափարեան եւ Հացպանեան ընտանիքները:

Ս. Պատարագէն ետք, տեղի ունեցաւ Մատրան կողքին գտնուող Խորհրդատան բացումն ու օրհնութիւնը, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազանին: Առաջնորդ Սրբազանը վեր առաւ բարերարին՝ Տիար Յովսէփ Պոյաճեանի նուիրեալ ծառայութիւնները Ազգ. Առաջնորդարանիս ու մեր եկեղեցիներուն. արդարեւ, Տիար Յ. Պոյաճեան անդամ է Ազգ. Առաջնորդարանի Շէնքի Յաճնախումբին, անոր ծառայութիւնները ի սպաս դրուած են նաեւ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ ու Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին: Անոր նուիրաբերումը տարածուած է նմանապէս հայկական միութիւններու:

Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Պոյաճեան, Չափարեան եւ Հացպանեան ընտանիքներու ծնողներուն եւ հանգուցեալ հարազատներուն:

## PRELATE CONDUCTS THE OPENING CEREMONY AND BLESSING OF THE PRELACY VESTRY

On the evening of Saturday, February 6<sup>th</sup>, 2010, Divine Liturgy was celebrated at the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel. Divine Liturgy or evening services take place at the Chapel on the first Saturday of each month.

Divine Liturgy was celebrated by Very Rev. Fr. Barthev Gulumian. The "Lousavorich" youth choir participated in the Liturgy.

Following the service, the Prelate conducted the opening and blessing of the Vestry located adjacent to the Chapel. Vestry sponsors Mr. and Mrs. Hovsep and Elo Boyajian and family members were present for the ceremony. Also in attendance were this year's Christmas Dinner sponsors, the Jabarian and Hasbanian families.

The Prelate spoke highly of the Mr. Boyajian's many years of service to the Armenian Church and community, which includes his contributions as a member of the Prelacy Building Committee as well as to St. Sarkis Church of Pasadena and Holy Cross Cathedral of Montebello.

Requiem for the souls of departed Boyajian, Jabarian, and Hasbanian family members was offered prior to the ceremony.